Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

Ջրային կոմիտեի կարիքների համար ապրանքի մատակարարման թիվ ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/1-2 պայմանագրի կատարման նկատմամբ հանրային հսկողության արդյունքների քննարկման վերաբերյալ

ք. Երևան 25.12.2023թ.

Քննարկմանը մասնակցում էին՝

Վ. Օհանջանյանը - Ջրային կոմիտեի մոնիթորինգի և վերլուծությունների վարչության պետի պաշտոնակատար (մասնագիտական խմբի ղեկավար),

Ս. Ասրյանը – Ջրային կոմիտեի մոնիթորինգի և վերլուծությունների վարչության պետի տեղակալի պաշտոնակատար,

Ա. Մակարյանը – Ջրային կոմիտեի մոնիթորինգի և վերլուծությունների վարչության գլխավոր մասնագետ,

Գ. Մանուկյանը – Ջրային կոմիտեի մոնիթորինգի և վերլուծությունների վարչության խորհրդական՝ առանձին գործառույթներ համակարգող,

Վ. Սարգսյանը – «Պարագիծ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ:

Քննարկման օրակարգի հարցը

1. «Պարագիծ» ՍՊԸ-ի հետ 24.10.2023թ. կնքված թիվ ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/1-2 պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի կատարման նկատմամբ «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից հանրային հսկողության արդյունքների քննարկման վերաբերյալ:

Վ. Օհանջանյանը ներկայացրեց, որ 20.12.2023թ. «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից ստացվել է Ջրային կոմիտեի կարիքների համար հոսքաչափերի ձեռքբերման նպատակով հայտարարված ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/1 ծածկագրով հրատապ բաց մրցույթի շրջանակներում (միայն 2-րդ չափաբաժնի մասով) «Պարագիծ» ՍՊԸ-ի հետ 24.10.2023թ. կնքված թիվ ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/1-2 պայմանագրի կատարման նկատմամբ իրականացված հանրային հսկողության արդյունքում ներկայացված դիրքորոշումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5.1-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն պատվիրատուն ներկայացված դիրքորոշման վերաբերյալ կազմակերպել է քննարկում՝ դրան մասնակից դարձնելով նաև պայմանագրի կողմ հանդիսացող «Պարագիծ» ՍՊԸ-ի ներկայացուցչին: «Պարագիծ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը ներկայացրել է մանրամասն պարզաբանումներ «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից նշված անհամապատասխանությունների վերաբերյալ՝ ներկայացնելով դրանք հիմնավորող փաստաթղթեր, որոնք մասնագիտական խմբի կողմից ընդունվել են որպես ի գիտություն:

Մասնագիտական խմբի ղեկավար՝ **Վ. Օհանջանյան**

Մասնագիտական խմբի անդամներ՝ **Ս. Ասրյան**

Ա. Մակարյան

Գ. Մանուկյան

«Պարագիծ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ **Վ. Սարգսյան**